տասն և հինգ օր մնում գիւղում, այդ ժամանակամիջոցում գիւղացիները նրանց համար ծախսում են 60 հաւ, 4 ոչխար, 3 լիտր դանտ, 1/4 լիտր թէյ և 100 հաւկիթ։ Բայց անխիղճները դրանով չեն գոհանում, նրանք շիկացած շամփուրներով դաղում են գիւղի քէդխուդայի ձեռներն, ապա նրա տան դորգի վրայ կրակ ձգում ու սակարկութիւն անում, որպէսզի կրակը վերցնեն. անօգնական քէդխուդան հինգ թումման փող վճարելով ազատում է գորգն այրուելուց։ Այնուհետև նրանք գնում են Տէր-Գրիգոր քահանայի տունը և նրանից բոնի առնում եկեղեցու բաժակը (գինին) և խմում։

1917 թուին Մըրզա-Ղուլի խանը մտնելով գիւղ առնում է 70 թուման։ 1918 թ. Հուսէն-Ղուլի խանը ձմրան 60 ձիաւորով գալիս է գիւղ և մի գիշեր մնում. հեռանալիս առնում է 42 թուման։

Այսպէս նոյն թշուառ և անմխիթար դրութեան մէջ է գտնուում Հաղանի գիւղացիութիւնը, նրանցից շատերը հաբրըստահարութիւնից այն աստիճան քալքալել էին, որ ծախսում էին իրենց տան գերանները և հացի տալիս։

— Վարժապետ Ջան,— մատով ցոյց տուեց ինձ Տէր-Գրիգոր քահանան, — տեսնում ես դիմացի սիրուն բալախանայով էդ տունը. դեղի քէդխուդի տունն էր, էնոր չափով արին, խեղճը էնպէս քանդուեց, որ ախրը սովծութենէ մեռան նրա կինն ու քուլֆաթը և ինքն էլ թողեց գնաց գիւղից. այժմ փակ են էնտուր տան դռները։

Մենք բոլորս ընկանք տխուր մտածմունքների մէջ. լուռ էինք, ինչպէս սարերը։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	400
2	Չունևոր	190
3	Միջակ	57
4	Ունևոր	40
5	Հարուստ	—
	Ընդամենը	687